ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ.

Վահան Ամատունի մեծանուն Հայ իշխանի շիրիմը գտնուում է Օշական գիւղում Ս. Մեսրովբ թարգմանչի Եկեղեցւոյ սրահի հարաւային կողմում, որի վերայ ի հնումն կառուցած փոքրիկ մատուռը այնպէս քայքայուած է, որ մի քանի տարուց յետոյ նորա հետքն անգամ չէ երևալու։ Մի այսպիսի ազգային բազմերախտ Իշխանի շիրիմը թողուլ այսպիսի անշուք և քայքայեալ դրութեան մէջ՝ մեզ — Հայերիս անպատշաճ համարելով՝ Ս. Էջմիածնի Միաբանութիւնը ցանկացաւ ազգային հանգանակութեամբ կառուցանել Նորա շիրմի վերայ Նորա մեծանուանն արժանի մի փոքրիկ գեղեցիկ մատուռ՝ որի վերայ կծախսուի մօտաւորապէս ոչ աւելի քան 800 ռուբլի։ Վասնորոյ Ս. Էջմիածնի Միաբանութիւնը իւր մէջ հանգանակութիւն անելուց յետոյ՝ դիմումէ և բարեսէր Ազգայիններին, խնդրելով մասնակցել այս ազգային բարի գործին իւրեանց առատաձեռն դրամական օժանդակութեամբ։

Նուիրադրամները պէտք է ուղարկել Ս. Սինոդի անունով։

Նուիրատուաց անուններն ու նուիրանաց քանակութիւնը Արարատը պարտք է համարում հրատարակել իւր էջերում։ Նոյնպէս և կառուցանելի մատրան պատկերը։

Խնդրումենք Մեծապատիւ Հայ խմբագրներից սոյն յայտարարութիւնը արտատպել իւրեանց թերթերի մէջ։

Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ թեմական Դպրանոցի ՏԵՍՉԱԿԱՆ պաշտօնը թափուր մնալով Պ. Ա. Բահաթրեանի մահուամբը, նոյն Դպրանոցի Հոգաբարձութիւնը խնդրումէ ցանկացողներին յայտնել Հոգաբարձութեան իւրեանց յօժարութիւնը յանձն առնուլ այդ պաշտօնը։

Դպրանոցի Տեսչի պարտականութիւններն են, իբրև Նորա մերձաւոր կառավարող՝ հսկել և պահպանող լինել ներքին բարեկարգութեան և յառաջադիմութեան նորին ըստ ամենայն մասանց (կանոնադր. Դպր. յօդ. 29)։

Դպրանոցի Տեսուչն ընտրի յուսումնական և յարժանաւոր եկեղեցականաց կամ աշխարհականաց՝ աւարտելոց զընթացս ուսման ի ճեմարանի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի կամ ի բարձրագոյն ուսումնարանս Տէրութեան (յօդ. 30)։

Տեսչութեան համար թոշակ սահմանուած է տարեկան 1800 ռուբլի։ բացի բնակարանէն և վառելեաց, ևս և միոյ առարկայի ուսուցչութեան ոռճկէն, որ ունի ստանալ առանձին՝ ըստ թուոյ դասուցն (յօդ. 31)։

Դպրանոցի այլ կանոնաց և դրութեան ծանօթանալ ցանկացողներին կը յուղարկուի Նորա տպագիր կանոնադրութիւնը։

Ն-Ի-Ֆ-Հ Է-ՐՀ-Ը-Ն Հ-Ֆ-Բ-Ը-----

ՍՈՒՔԻԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.